ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«05» օգոստոսի 2026թ. N ՄՈ/ 499 -Ա

ք. Արմավիր

«ԲԱԳԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Գեղեցիկ Ավետիսյանի 2026 թվականի օգոստոսի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գեղեցիկ Ավետիսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդի մասը՝ 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Գեղեցիկ Ավետիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Նարինե Խշոյանին:
3. «Բագարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գծով տնօրենի տեղակալ Նարինե Խշոյանի աշխատավարձի վճարումը 2026 թվականի օգոստոսի 10-ից 21-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Գեղեցիկ Ավետիսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 24-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 20240814 Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 04447253